

Անցկացվեցին շտաբային ուսումնավարժություններ

27.07.2015թ.

«Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2015թ. հիմնական միջոցառումների պլանի համաձայն հունիսի 26-ին Սյունիքի մարզում անց է կացվել շտաբային ուսումնավարժություն՝ «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ՔՊ համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրման դեպքում» թեմայով:

«Սյունիքի մարզպետի որոշման համաձայն ուսումնավարժությանը մասնակցում էին «Սյունիքի մարզպետարանի աշխատակազմը, մարզի տարհանման հանձնաժողովը, մարզային ՔՊ ծառայությունների պետերը, Կապան և Քաջարան քաղաքային, ինչպես նաև Ագարակ, Շիկահող, Սրաշեն գյուղական համայնքների ՔՊ պետերը, Սյունիքի ՄՓՎ ծառայողները:

Շտաբային ուսումնավարժության նպատակն էր ստուգել Սյունիքի մարզի ՔՊ համակարգի ղեկավար մարմինների պատրաստականությունը, կատարելագործել Սյունիքի մարզի ՔՊ ղեկավար կազմի ունակությունները ՔՊ միջոցառումների իրականացման գործում: Իրավիճակի զարգացման պլանի համաձայն ուսումնավարժության բոլոր մասնակիցներին և ՔՊ ծառայություններին տրվեցին կոնկրետ առաջադրանքներ և խնդիրներ:

Ուսումնավարժության ընթացքում մարզային ՔՊ ծառայությունների ղեկավարները հստակ ու ժամանակին կարողացան լուծումներ տալ առաջադրված խնդիրներին: